

«Ո՞Ր Է ՁՆԵՐ ՀԱՒԱՏՔԸ»

«Ո՞ր է ձեր հաւատքը» (Ղկ. 8.25): Յիսուս այս հարցումը ուղղեց իր աշակերտներուն, երբ անոնք ծովուն վրայ փոթորիկ մը դիմագրաւելով՝ խոռվեցան ու վախցան: Դիւրին է հաւատալ, երբ փորձութիւններ բացակայ են մեր կեանքէն: Դիւրին է հաւատալ, երբ ամէն ինչ հեզասահ ու խաղաղ կ'ընթանայ մեր կեանքին մէջ: Բայց ո՞ր է մեր հաւատքը, երբ փորձութիւնները մեզ կը շրջապատեն: Ո՞ր է մեր հաւատքն ու համոզումը, թէ մենք Քրիստոսի մէջ է որ կը հանգչինք եւ թէ Քրիստոս ի՛նքն է ղեկավարը եւ առաջնորդը մեր կեանքի նաւերուն: Նեղութեան ընթացքին իրար անցնիլն ու մտահոգուիլը, Քրիստոսի ղեկավարութեան եւ առաջնորդութեան կարողութիւնը կասկածի տակ առնել կը նշանակէ:

Վստահի՛ր Աստուծոյ: Ան, որ հացն է կեանքին չի՞ կրնար կերակրել հոգիդ: Ան, որ աղբիւրն է կեանքին չի՞ կրնար յագեցնել ծարաւը սրտիդ: Ան, որ տիեզերքը իր ձեռքերուն մէջ բռնած է չի՞ կրնար ապահով ձեռով իր ափին մէջ պահել: Այո՛ կրնայ: Ուրեմն վստահէ՛ իրեն: Երբ վստահիս Աստուծոյ՝ անիկա զինք քեզ պաշտպանելու համար պիտի մղէ:

Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ ԱՅՏՊԷՍ ԱՂՕԹԵՑ

ՄԵՆՔ ԱԼ ՄԻԱՆՆՔ ԱՂՕԹՔԻՆ

Դուն որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, թող աչդ հովանի՛ ըլլայ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած՝ թէ նամբան քայած ատենս, քնացած՝ թէ արթնցած ատենս, որպէսզի երբեք չսասանիմ: Եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄԱՆ ՍՈՒՐԲ ՂԱՏԱՐԱԳ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ: Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը:

Հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝

Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-8:30, Պուրճ Համուտի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, 18-40 տարեկան երիտասարդ-երիտասարդուհիներու

ծանօթացման ընկերային հաւաք, ապա՝ ժամը 8:30-9:00, Աստուածաշունչի սեր-տողութիւն եւ հայ քրիստոնէական կեանքի հաւաքական քննարկում:

Աստուածաշունչի սերտողութիւնը պիտի կատարէ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՄԱՐՏ 2019

ԹԻՒ 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 33.2-22: Հն. 12.1-13.10:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 5.17-48

Բ. Քառասնորդաց: ԱՐՏԱՔՍՄԱՆ

Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու: Չեկայ ջնջելու, այլ՝ ամբողջացնելու: Հաստատ գիտցէ՛ք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնը կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բռն մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ գանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկինքի արքայութեանն ներս կրնաք մտնել այն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ իրենց հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութեանն աւելի ըլլայ:

Լսեր էք, որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեն պիտի բերուի. կամ, ան որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհի սեղանին վրայ ընծաղ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծաղ սեղանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա եկու՛ր եւ ընծաղ Աստուծոյ մատուցանէ՛:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս, այլապէս՝ քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին եւ բանտ կը նետուիս: Վստահ եղի՛ր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսեր էք որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն բրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ՛ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներէդ մէկը կորսնցնես քան թէ ամբողջ մարմնով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ՛ ու նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է որ անդամներէդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՆԱՄԱԿՆԵՐ**

*ԵՍՍՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԳԻՐԲԷՆ  
33.2-22*

Ողորմէ՛ մեզի, Տէր, որովհետեւ քեզի՛ յուսացինք. անհաւատներու սերունդը կորուստի պիտի մատնուի, բայց դուն պիտի փրկես մեզ ներութեան ժամանակ:

Ժողովուրդները քու ահեղ ձայնէդ շշմեցան, հեթանոսները փախան քու վախէդ:

Ինչպէս խառնիքն ու մարախը կանաչութիւն կ'ոչնչացնեն, այնպէս յափրշտակիչները պիտի թափին անոնց աւարին վրայ, եւ անոնք ծաղր ու ծանակ պիտի ըլլան:

Սուրբ է մեր Տէր Աստուածը որ բարձունքներուն մէջ կը բնակի: Իրաւունքով եւ արդարութեամբ պիտի լեցնէ Սիոնը:

Այն ատեն հեթանոսները Օրէնքին ձեռքը պիտի մատնուին, իսկ մենք մեր գանձերով պիտի փրկուինք: Իմաստութիւնը, գիտութիւնը եւ աստուածաշատութիւնը պիտի ըլլան այն գանձերը, որոնցմով պիտի արդարանանք:

Այն ատեն ձեր կրած երկիւղները իրե՛նք պիտի կրեն: Անոնք՝ որոնցմէ դուք կը վախնայիք, իրե՛նք պիտի վախնան ձեզմէ, պատգամաւորներ պիտի դրկեն ձեզի՝ խաղաղութիւն ուզելով, դառնապէս պիտի լան եւ խաղաղութիւն խնդրեն, որովհետեւ անոնց նամբաները իրենց աւարտին հասան: Այ պիտի չվախնաք հեթանոսներէն: Անոնց հետ ձեր դաշինքը վերջ պիտի գտնէ եւ ա՛յ գանոնք մարդու տեղ պիտի չդնէք:

Աշխարհը կը սգայ, որովհետեւ անշփացաւ: Լիբանանը մերկացաւ, Սարոնի դաշտագետիւնը տօթէն այրեցաւ, Գալիլիա եւ Կարմեղոս լերկ մնացին:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ  
ՀՈՌՈՎԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ  
12.1-13.10**

Ուստի եղբայրներ, քանի Աստուած այնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ կ'աղաչեմ, որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք որպէս կենդանի գոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ասիկա է Աստուծոյ ուզած նշմարիտ պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ՝ նորոգուած միտքերով նոր մարդ եղէ՛ք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ:

Ինձի տրուած Աստուծոյ շնորհով հետեւեալ պատուէրը կու տամ իւրաքանչիւրիդ. մեծամիտ եւ ինքնահաւան մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէ՛ք եւ միայն Աստուծմէ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէ՛ք դուք ձեզ: Ինչպէս մեր մարմինը բազմաթիւ անդամներ ունի, որոնց պաշտօնը նոյնը չէ սակայն, այնպէս ալ Քրիստոսի միացած ըլլալով՝ մենք բոլորս մէկ մարմին ենք: Թէեւ որպէս անդամներ իրարու կապուած ենք, բայց Աստուծոյ շնորհքը իւրաքանչիւրիս տարբեր պարգեւ մը տրուած է, զոր պէտք է գործածենք: Եթէ պատգամախօսութեան պարգեւը ունինք՝ պէտք է պատգամենք մեր հաւատքին համեմատ: Եթէ ծառայելու շնորհքը տրուած է՝ պէտք է ծառայենք: Եթէ ուսուցանելու ձիրքը ունինք՝ պէտք է ուսուցանենք: Եթէ յորդորելու կարողութիւնը ունինք՝ պէտք է յորդորենք: Իր ունեցածը ուրիշներուն բաժնորը առատօրէն թող բաշխէ: Վերակացու եղողը եռանդագին թող աշխատի: Ողորմութիւն ընողը խնդութեամբ թող ընէ:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ԹԵՌՊՈՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ**

Ամասիոյ Սարու գիւղէն՝ բարեպաշտ ծնողքի զաւակ: Կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուորներու այն կարգին, որ կը կոչուէր դիոն, այսինքն «նորամուտ»: Ծամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ահագին վիշապի մը, զոր սպաննեց նիզակով եւ հաւատքով: Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնէութիւնը, քննութեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, զիշեր ատեն կրակի տուաւ մեծագոյն աստուածուհի Ռէայի մեհեանը: Այս պատճառաւ սաստիկ քանակով ծուլէ վերջ բանտ նետուեցաւ, ուր երկնային տեսիլքի մխիթարութիւնն ունեցաւ: Կրկին հարցաքննութենէ վերջ այրեցին սուրբը 306-ին: Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ եկեղեցիի վերածուեցաւ:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Թէոդորոս Զօրավարին տօնը կը զուգարկայի Շաբաթ՝ 9 Մարտ 2019-ին:

**ԱՌԱԿ. ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12**

Բարի մարդուն իրատը ընդունելի է հարագատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:

Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:

**ԻՆՉ Է ՊԱՅՔԸ**

*Մեր ժամանակակից սերունդը պահեցողութիւն ըսելով թերեւս կը հասկնայ մտեղենէ, կաթնեղէնէ եւ ամէն տեսակի կենդանական արտադրութենէն հրաժարիլ: Ասիկա սակայն պահքի մասին ոչ ժամանակներուն եւ քաղցի դասակարգին ըմբռնումն է: Սկիզբէն այնպէս չէ եղած: Ըստ Աստուածաշունչի տուեալներուն, պահեցողութիւնը սուգի եւ ցաւի շրջան մըն է, ինքնագրկանք մը՝ կամ ինքզինքին տրուած կամաւոր պատիժ մըն է, որ կ'իրագործուէր որոշ ժամանակ մը ամբողջովին հրաժարելով ուտելէ եւ խմելէ, ինչպէս նաեւ ամէն տեսակ ՀԱՃՈՅՔԷ: Կարելոր է այս վերջին պարագան, այսինքն հրաժարիլ նաեւ հանոյքէ, վասնզի պահք եւ հանոյք իրարու հակադիր երեւոյթներ են, եւ հետեւաբար կարելի չէ երեւակայել պահեցողութիւն մը, որուն կ'ընկերանայ նաեւ խաղ, ուրախութիւն եւ պար: Ուրեմն կրօնական նպատակով ինքզինքին պարտադրուած որեւէ գրկանք պահեցողութիւն է:*

*Պահէն անբաժան էր ԱՂՕԹՔԸ: Եթէ ուսումնասիրենք սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, թէ ուր որ պահքի մասին հրաման կը տրուի, կը յանձնարարուի միաժամանակ աղօթքը: Երբ մարդիկ պահեցողութիւն կ'ընեն, միաժամանակ կը կիրարկեն նաեւ աղօթքը: Պահքը սակայն հետզհետէ աւելի կիրարկելի դարձաւ իբրեւ ապաշխարանքի նշան եւ արտաշայտութիւն:*